# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1925 – *հոկտեմբեր* – 1925


ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

*էջ*

Ռ. Կ. — *Ամբրոսեան արարողութիւնք.* 289
Տօքթ. Վահր. Յ. Թորգոմեան. — *Հայ Բժշկական Ձեռագիրք Ս. Ղազարու վանքին.* 292
Պրոֆ. Ն. Ադոնց. — *Քննական նշմարներ Եզնիկի մասին* . . . . . . 294

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

Հ. Աճառեան. — *Հայերէն նոր բառեր Գիրք Թղթոցի մէջ.* . . . . 298

ԳՐԱԿԱՆ

Հ. Ա. Ղազիկեան (*թրգմ.*). — *Նիբելունգներուն երգը* . . . . . . 301
Արսէն Երկաթ. — *Գաղտնիք* . . 306

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Ռոալտ Ամունտսըն. — *Իր ճամբորդութիւնը դէպի բեւեռ* (*թրգմ.* Հ. Սերաբիոն Ուլուհոճեան) . . . . . . . 306
Արամ Երեմեան. — *Հայ նորագոյն կոմպոզիտօրներ* (20-րդ *դար*). *Աղեքսանդր Սպենդիարեան, Ռոմանոս Մելիքեան.* . 311
Հ. Ղ. Տայեան. — *Մայր Դիւան Մխիթարեանց Վենետիկոյ ի Ս. Ղազար* . . 317


# SOMMAIRE

1925 - Octobre - 1925


PHILOLOGIE

p.

*V. G.* — Le Rit Ambrosien. . . 289
*Doct. Vahr. H. Torkomian.* — Traités de médecine, Manuscrits arméniens du monastère de St. Lazare . . . 292
*Prof. N. Adonz.* — Observations critiques sur l'œuvre d'Eznik . . . 294

LINGUISTIQUE

*H. Adjarian.* — Mots inconnus arméniens dans le Recueil des Lettres . 261

LITTÉRATURE

*P. A. Gazighian.* — La chanson des Nibelungen (traduction en vers arm.) . 301
*Arsène Jergath.* — Secret (póesie) . 306

DIVERS

*Roald Amundsen.* — Son voyage vers le pôle (traduit par *P. Serapion Oulouhodjian*) . . . . . . . . 306
*Aram Yerèmian.* — Les compositeurs arméniens d'aujourd'hui. (20ème siècle) Alexandre Sbèntiarian, Romanos Mélikian. 311
*P. L. Dayan.* — Les Archives Centrales des Mékhitharistes de St. Lazare de Venise . . . . . . . 317


# ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

*Թաւրիզէն Պ. Հայկ Աճեմեանի կողմանէ առ Խմբագրութիւնս հասած նամակէն կը քաղենք հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնները.*

*Հայր Սուրբ*

*Անշուշտ Ձեզ համար հետաքրքիր կը լինի, եթէ ես մի քանի համառօտ տեղեկութիւններ հաղորդեմ այս ամրան կատարածս ուսումնասիրական ճամբորդութեանս մասին, Մակուի Գաւառում։*

*Մայր-Արաքսի լեռնահովիտը կտրեցի անցայ ոտքով և հասայ Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը, որն իւր հրաշակերտ և չքնաղատես կառուցուածքով պատիւ է բերում Հայոց ճարտարապետական արուեստին։ Կատարելապէս ուսումնասիրեցի և ի գիր առի վանքիս հին և նոր պատմութիւնը, արտանկարեցի բազմաթիւ քարաքանդակ նկարներ, որոնք պատկերացնում են՝ խաչեր, մանուածապատ ձևեր և զարդեր, ամենքն էլ զուտ արդիւնք՝ Հայ ճարտարապետութեան։ Նկարեցի տաճարի յատակագիծը և մի խօսքով լիակատար ուսումնասիրութեան ենթարկեցի վանքը, իր յարակից շինութիւններով։*

*Այս մենաստանի մասին, դեռ եւս մենք չ'ունինք*

digitised by A.R.A.R.@

լիակատար մի ուսումնասիրութիւն, եթէ հաշւելու չը լինինք բազմավաստակ Հայր Ալիշանի հաւաքագրած ուսումնասիրութիւնը (տես «Սիսական» էջ՝ 516–522)։ Պատերազմի արհաւիրքներին զոհ գնաց նաև այս վանքը կորսնցնելով իր ամբողջ տնտեսութիւնը։ Քսան երեք երկար տարիներից ի վեր վանքի վանահայր է տէր Ղևոնդ վարդապետ Բարսեղեանը, (միաբան վանայ կտուց Անապատ մենաստանի) որ անձնական զրկանքներով և չորքաշ կեանքով դեռ մինչև այժմ կը շարունակէ իւր վանահայրական պաշտօնը։

Ս. Ստեփաննոս Նախավկայից ճանապարհ ընկայ դէպի Արտազի դաշտը։ Գնում եմ Արաքսի ափերով, աչքերս մի՛շտ ի ջուր, չէ՛շտ ի ջուր ուղղած՝ կարծես, ուզում եմ տեսնել Հայ ժողովուրդի Մեծ վիշտը, որ իւր ծոցին մէջ ծւարել է Մայր Արաքսը։ Ի՞նչ պատկերներ, երազական ի՜նչ տեսարաններ են անցնում աչքիս առջևից և ես տարւած տանցեալ փառքերի խորհրդածութիւններով «Հին հին դարուց յիշատակ ալեաց մէջը պտրում եմ»։ Լուռ է Մայր–Արաքսը, հոնքուր հօնքուր լալիս են նրա ջրերը և նազելաչուք ճողփիւններով չոյելով իրենց ափերը՝ գնում են հա՛ գնում։ Օրը երեկոյանում է. արեւն իր ծիրանեգոյն [illegible] [illegible] է Հայաստանի Լեռնապապ Մասիսի յաւերժապէս ձիւնածածկ և ծերունազարդ Գագաթի վրայ։ Մայր–Արաքսի ափին կանգնած, աչքերս Մասիսի վեհափառ ճակատին ուղղած, սիրտս յուզումով պարուրւած, արդեօք ո՞ր Հայ մարդը կարող է անտարբեր մնալ և չը յիշել, Հայոց մեծաց փառքը, մեր ժողովուրդի քաշած տառապանքները և Հայ ազգի ամբողջ դարաւոր մարտիրոսագրութիւնն ու արիւնը, որոնց իբրեւ լուռ վկայ հանդիսանում են Արաքսն ու Մասիսը։

Օգոստոսի 1-ի արշալոյսին, երբ արևը ծագեց Հայոց լերանց բարձունքներէց, մենք մտանք Արտազի պատմական դաշտը, որի ընդարձակ շրջակայք երիզւած են կանաչազարդ և ջրառատ լեռներով։

Իմ ուղեկիցը, հայրենասէր տէր Յովհաննէս Ծ. Վրդ. Հիւսեանը սկսում է ոգեկոչել յիշատակը Վարդանանց զօրավարաց, իսկ ես երգում եմ հոգելոյս Հայր Ալիշանի «Բլբուլն Աւարայրի» և երբ ձայնում եմ «Թադէի վանուց ձէնիկդ ինձ դպաւ» ահա հեռում նշմարւում են բարձրասլաց կաթուղիկէները Թադէի վանուց։ Հասնում ենք վանքը, որի ամբողջ հոյակապ և փառաւոր տաճարը առջևնիս է կանգնած իբրև մի հսկայ, որին թշնամիները հազարաւոր վէրքեր են հասցրել բայց նա միշտ էլ անպարտելի է մնացել և այժմ էլ լուռ կանգնել է մեր դիմաց։

Մեր զգացումները ծով դառնալով յորդում են, մեր վիշտը լեռնանում է, մեր հաւատքը խորանում և մեր յոյսը վառ է մնում, որ մի օր այն «Երբոր բացուին դռներն յուսոյ և մեր երկրէն փախ տայ ձմեռ», մարտնչող, ստեղծագործող և վաստակած Հայ ժողովուրդը պիտի Մայր–Հայրենիքում ամփոփուի և տէր դառնայ իւր հին ու նուիրական իրաւունքներին։

Մտնում ենք տաճարը և երկիւղածութեամբ համբուրում ենք շիրիմը Ս. Թադէի, որը քրիստոնէութեան լոյսը արծարծեց Հայաստան աշխարհում։

Գնում ենք մատուռը Ս. Սանդուխտ կոյսի, ուր մուշ մուշ կը ննջէ կարմիր «Շուշան Շաւարշանայ»։ Կարո՞ղ ենք արդեօք լուռ մնալ այս անպաճոյճ շիրմին առջև, որի խորքում կը հանգչի մարմինը Ս. Սանդուխտ կուսին։ Մատուռի խաւարչտին անկիւնից կարծես լսում ենք մրմունջը Հայր Ալիշանի, որ կարկամած շրթունքներով արտասանում է.

«Սանդո՜ւխտ դստրիկ իմ սիրուն.
Ողորմէ՛ հօրդ աչերուն...»։

Քեզ ի՞նչ երգէ Նահապետ՝

«Սանդո՜ւխտ անմահ թագուհի
իմ Հայաստան աշխարհի....
Կուսանք Հայոց, Նոր շուշան
Բերէք ի դաշտ Շաւարշան...»։

Լռութիւն... ոչ մի ձայն. գիշեր է. լուսնակն անուշ՝ կը պատէ արար աշխարհը և մենք կը հանգչինք խորհուրդ խորին մենաստանի պատերի տակ...։

## ԿԸ ՆՈՒԻՐԷ

ՏԻԿԻՆ ՀԱՅԿԱՆՈՒՇ Գ. ՍԻՆԱՆԵԱՆ

Լիրա. 500 Որբանոցին Միլանու
» 500 Եկեղեցւոյ Ս. Ղազարու
» 500 Եկեղեցւոյ Ս. Խաչի (Վենետիկ)

Իւր և զաւակաց ողջամբ դարձին համար ի Պոլիս

digitised by A.R.A.R.@

# ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Հ. և Ջ. ԱՍԱՏՈՒՐ. — *Թանգարան Հատընտիր Հատուածներու, Արձակ և Ոտանաւոր. (Միջին Դասընթացք. Դ. Տարի. և Բարձրագոյն Դասընթացք. Ե Տարի). Հրատ. Ա. Եագըճեան Գրատան։ Կ. Պոլիս* 1926. *էջ* 280. *գին* 70 *դրշ.*։

Ց. ԱՐՍԼԱՆԵԱՆ. — *Սատոր. կեանքն ու գործը (ուսանասիրութիւն). կիւլիսթանէն և պօսթանէն հատուածներ. Հրատ. և Տպ. Արամ Ստեփանեան։ Աղեքսանդրիա* 1925. *էջ* 48. *գին'* 5 *ե. դ.*։

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՍԹՈՌՈՑ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ. — *Նախկին վարդապետ Աբել Նազարեանի «Ինչու հեռացայ» գրքոյկին առթիւ։ Փարիզ* 1925. *տպ. «Արձագանգ Փարիզի»ի. էջ* 15։

ՂԵՒՈՆԴ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ. — *Աղօթքը (պարզ քարոզ մը)։ Փարիզ* 1925. *տպ.* Կ. Ց. *Ներսէս. էջ* 90.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԲ. ԳԻՐՔ ՈՒՍՄԱՆՈՂԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ. — *Սփոփանք ժողովուրդին համար։ Պրուքլին* 1925. *էջ* 58։

ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ. — *Ջուարթ քառեակներ։ Պոսթոն* 1925. *տպ. «Պայքար»ի. էջ* 91. *գին* 50 *սէնթ*։

Տ. Ա. ՏԻՔԻՃԵԱՆ (*Թարգմ.*)։ — *Հայ Քաղաքացիական փորձագատը Միացեալ Նահանգաց Շրջանային Դատարանին մէջ (պաշտօնական Ատենագրութիւն).* 1925. *էջ* 104. *գին' տոլ.* 1։

ԲԵՌՕՅ. — *Մանկավէպեր. Թրգմ.* ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ։ *Կ. Պոլիս* 1925, *տպ. «Արև» էջ* 110. *գին'* 50 *դր.*։


ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՕՐԱՑՈՅՑ

ԵՒ

ԳՈՒՇԱԿ ՕԴՈՑ

1926

Թուականին Քրիստոսի ըստ Նոր Տումարի ՃԿԹ (169րդ) տարի

ՎԵՆԵՏԻԿ. — ՄԽ. ՏՊԱՐԱՆ

*Գին' թղթակազմ ֆր.* 1. —

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԹԷՈԴԻԿԻ

«ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ»

1926

*Ճոխ' յօդուածներով և պատկերազարդ. Գին 2 տոլար, 35 ֆր. 7½ շիլին 100 տրխմ. 300 դրշ.*

*Հասցէն*

*Théofig*

*C/o Mr. Lévon Tachdjian*

*B. P. N. 295*

*(Chypre)* *NICOSIA*


digitised by A.R.A.R.@